Armenian Progressive Youth NGO
18 Prague street, 0082 Yerevan
E-mail : apy@apy.am
Web: www.apy.am

Հայ Առաջադեմ Երիտասարդություն ՀԿ
18 Պրահայի փողոց, 0082 Երևան
Էլ.փոստ՝ apy@apy.am
Կայք՝ www.apy.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ» ՀԿ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ հասարակական կազմակերպության դիտորդները պարտավոր են դիտորդական առաքելության ընթացքում հետևել վարքագծի հետևյալ պարտադիր կանոններին՝

1. Շրջահայաց կերպով իրականացնել դիտորդի պարտականությունները՝ առանց կողմնակալության կամ նախատրամադրվածության:
2. Իր պարտականությունների կատարման ընթացքում զերծ մնալ օրենսդիր և գործադիր մարմինների, ՏԻՄ–երի, պաշտոնատար անձանց և քաղաքական կուսակցությունների որևէ տեսակի ազդեցությունից, ինչպես նաև ամեն տեսակի միջամտություններից:
3. Հարգել և պահպանել ՀՀ ընտրական օրենքներն ու կանոնակարգերը, մասնակցել կազմակերպության կողմից իրականացվող՝ ընտրական օրենսդրության ու դիտորդների վարքագծի կանոնների վերաբերյալ պարտադիր ուսուցմանը:
4. Չվտանգել իրենց կամ այլ անձանց անվտանգությունը:
5. Մասնակցել դիտորդական առաքելության բոլոր պարտադիր հանդիպումներին ու քննարկումներին, կատարել դիտորդական առաքելության ղեկավարի ցուցումները:
6. Դիտորդատական ծառայության մեջ լինել ընտրությունների ամբողջ օրվա ընթացքում, ներառյալ քվեաթերթիկների հաշվարկը:
7. Լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որևէ հարցի նկատմամբ:
8. Չխոչընդոտել ընտրական գործընթացներին, անհրաժեշտության դեպքում հարցեր ուղղել ընտրական գործընթացը կազմակերպող և համակարգող պաշտոնյաներին, ուշադրություն հրավիրել առկա խնդիրների վրա:
9. Ընտրական հանձնաժողովում, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար պարտադիր կարգով տեսանելի ձևով կրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված սահմանված նմուշի վկայականը:
10. Պահպանել դիտարկումների ճշգրտությունը և ցուցաբերել բարձր մասնագիտական վարքագիծ, եզրակացությունները հիմնավորել միայն անձնական դիտարկումների և հիմնավոր փաստերի վրա:
11. Մշտապես դրսևորել բարձր անձնական զսպվածություն և մասնագիտական էթիկա:
12. Ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:
13. Չմիջամտել ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և քվեարկության ընթացքին, չիրականացնել քարոզչություն, ընտրական հանձնաժողովի անդամներին չտալ ցուցումներ:
14. Գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար: